Visa Signature Քարտի տրամադրման և սպասարկման սակագները

Ծառայության տեսակ	Սակագին
1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար	4 000 դրամ ամսական[1] կամ 40 000 ՀՀ դրամ տարեկան[2]
2. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
3. Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք[3]	Վարկային գիծ/հաշվի գերածախս. -ՀՀ դրամ՝ 18% Գերածախս. -արտարժույթ՝ 17%
4. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված (միայն վճարային գործարքների համար)	գործարքի ձևակերպման օրվանից մինչև հաջորդ ամսվա 14-րդ օրացուցային օրը
5. Ամսական պարտադիր մարումներ	10%
6. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	25 000 ՀՀ դրամ տարեկան
7. Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո
8. Քարտի գործողության ժամկետ	5 տարի
9. Կանխիկ դրամի տրամադրում բանկոմատներում և կանխիկի տրամադրման կետերում՝	
• *ԱԿԲԱ Բանկ (արտարժույթ կանխիկացնելու դեպքում գործում է այդ պահին Բանկում գործող սակագինը, որը հրապարակվում է Բանկի «Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման» սակագներում)*	1%
• *Այլ բանկեր Հայաստանում*	1%
• *Այլ բանկեր արտերկրում*	1%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ
10. Բանկի քարտային հաշիվներին կանխիկ դրամի մուտքագրում «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի բանկոմատների միջոցով	1%
11. Անկանխիկ վճարում քարտով	անվճար
12. Կանխիկի տրամադրման օրական առավելագույն չափ	▪ 2,500,000 ՀՀ դրամ ▪ 5,000 ԱՄՆ դոլար ▪ 5,000 եվրո
13. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ	5
14. Վճարային գործարքների օրական առավելագույն չափ	▪ 2,500,000 ՀՀ դրամ ▪ 5,000 ԱՄՆ դոլար ▪ 5,000 եվրո
15. ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով	0.5%
16. Բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ[4]	0.2%
17. SMS-տեղեկացում ծառայություն	անվճար
18. Քարտի փոխարինում (Հայաստանում)	5 000 ՀՀ դրամ
19. USSD-տեղեկացում ծառայություն	10 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)

Ծանուցումներ

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

ԱԿԲԱ ԲԱՆԿՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 16 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտարժութային ավանդի դեպքում - 7 մլն ՀՀ դրամ,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից ավել), և՛ արտարժութային ավանդների դեպքում – միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից պակաս), և՛ արտարժութային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվին ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Կանխիկի տրամադրման օրական առավելագույն չափը, մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը և կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը կարող են անվճար փոփոխվել քարտապանի բանավոր հանձնարարությամբ:

Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն

- **Անտոկոս ժամանակահատված** - արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործած մասը քարտային հաշվին մուտք անելու դեպքում քարտապանը տոկոսագումարներ չի վճարում:
- **Ամսական պարտադիր մարումներ** - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում քարտապանը պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները:
- **Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում: Ցանկացած տեսակի քարտի

[1] Քարտը տրամադրելուց հետո 6 ամսվա ընթացքում փակելու դեպքում գանձվում է միջնորդավճար՝ 6 ամսվա համար նախատեսված սպասարկման միջնորդավճարի և քարտի փակման օրվա դրությամբ քարտապանի կողմից վճարված ամսական սպասարկման միջնորդավճարի տարբերության չափով:

[2] Բանկում «Դասական», «Կուտակային» և «Ընտանեկան» ժամկետային ավանդ ունեցող հաճախորդներին դրամական միջոցների գրավային ապահովվածությամբ տրամադրվող վարկային գծերով քարտերի դեպքում՝ 30 000 ՀՀ դրամ տարեկան:

[3] Վարկային գիծ չունեցող քարտերի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք սահմանվում է տվյալ քարտատեսակի համար նախատեսված տոկոսադրույքի միջակայքի առավելագույն չափով:

[4] Բացի նշված սակագնից Բանկի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դիմաց կիրառվում է նաև սպասարկող բանկի միջնորդավճար՝ 0.3‰: Ընդ որում, ՀՀ այլ բանկերի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դեպքում ևս կարող է կիրառվել սպասարկող բանկի միջնորդավճար, որի չափը սահմանվում է տվյալ բանկոմատը սպասարկող բանկի կողմից:

թարմացվել է առ՝ 28.06.2024թ.

համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:

- **SMS-տեղեկացում** - քարտի դիմումի մեջ նշված հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում:

թարմացվել է առ՝ 28.06.2024թ.